

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ձր.

Վեցամսեայ 6 Ձր.

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւր մեկ ծրարով

Տարեկան . . . 14 Ձր.

Վեցամսեայ . . . 7 Ձր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԽԻԿ

Մանուցման տողը
20 սանթիմ

ՀԱՍՅԷ

Redaction du journal

„Iraounek“

VARNA (Bulgarie)


РЕДАКЦИЯ

НА ВѢСТНИКЪ

Иравуник

ВАРНА

Գրութեանը եւ տպարանը



Ի Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Ք Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՓԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԲ

ՔՈՒՊՈՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Մ Ե Ծ

ԽԱՀԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՄԱՆ

«Ինձի եկող, ստիպեցեալ
կեանքի բոլոր ծառայանքներէ
փրկուելու»

Բողոքանք

ՓՈԽԱՐԵՐԱԲԱՐ

«Եկայի առ իս ամե-
նայն վաստակեալ հօր
իւնոյ, եւ եւ հան-
գոցից զմեզ»

Աւետարան

Բողոքադատականութիւնն ալ կ'ըն-
դունի Բրահմանի պէս հոգեւոյ
յաւիտեանականութիւնը:

Ուրիշ հաւատքներ և իմաստա-
սիրութիւններ այսպէս չեն ըն-
դունիր, անոնք հոգին անմահ կը
նկատեն, և ամէն մարդու հոգին
ալ իւր ծնած օրէն կը յայտնուի,
միշտ նոր սկզբնաւորութեամբ:

Ըստ բողոքադատականի, հոգեւոյ
սկզբնաւորութեան և վախճանի
լաւութիւնը մեր հասկացողու-
թեան վեր է: Ուրիշ օր կու-
գանք չենք գիտեր, բայց ստու-
գիւ ամէն նորածին մանկան մէջ
ալ երեւցած հոգին նոր բան մը
չէ, յաւիտեանականութեան կու-
գայ, եւ մեր արդի կեանքն ալ
տեսարան մի է գոյութեան ան-
վախճան դրամային մէջ:

Մարդու հոգին բարի և չար
չգտնուիր: Նոյնանման խառ-
նուրդ մի է, որ երբեք չի մեռ-
նիր, այլ յաւիտեան կը տուայ:
Ամէն մարմին անցք մի է, ուր
հոգին ժամանակի մը համար կը
բնակի:

Հոգին պարզապէս կենթակայի
լընթաց ժամանակի մարդու
ունեցած բարի և կամ չար խոր-
հուրդներուն և գործերուն:

Մարդիկ ըստ գիւղաց չեն ծը-
նիր գիտուն կամ յիմար, արդար
կամ մեղաւոր, քաջ կամ տկար:
Կենաց պայմանը յաւիտեանական

օրէնքի մը բացարձակ որոշումն
է, մարդ ինչ որ կը սերմանէ
նոյնը կը հնձէ, և կամ կը հնձէ
ինչ որ կը սերմանէ:

Այսպէս ուրեմն, երբ կը տես-
նանք մէկը բնականօրէն չարու-
թեան տենջացող, այն է պատ-
ճառը որ անցելոյն մէջ ինք-
զինքը չարութեամբ դատարա-
կած է: Եւ եթէ ուրիշ մը կը
տեսնանք արդար ու գթասիրտ,
երկայնամիտ և գործաւոր, ան-
ցելոյն մէջ այս առաքինու-
թիւնները մշակած լինելու է:
Բարութեան հետեւած է, և իւր
հոգեւոյն սովորոյթն եղած է այդ
բանը:

Այս այսպէս է, ամէն մարդ-
ինքնիրեն պատրաստողն է: Մար-
դը իւր թերութեանցը համար
բացի իրմէն ուրիշը մեղադրե-
լու չէ: Դարձեալ բացի իրմէն
ուրիշէն չնորհակալ լինելու չէ
իւր առաքինութիւններուն հա-
մար: Արդարութեան անիմաս-
տութիւնը օրինօք ամէն մարդ բա-
ցարձակապէս ինքը իրեն ստեղ-
ծիչն է, ինչպէս նաև իւր ճակա-
տագրին:

Ծնուած է ու կը ծնի, այսու
կորոշուի իւրաքանչիւր մարդու
կարողութիւնը ինչ կերպ մարդ-
լինելուն, բայց միայն իւր կա-
րողութեամբն ալ չէ կարող ծնիլ
ուրիշ մը անհրաժեշտ է, ինքզին-
քը դրականապէս կազապարելու
համար, որ կարելի լինի աշխարհ
գալ:

Ամէն մարդ կրնայ իրեն հա-
ւասար բաղդակից մ'ունենայ,
եթէ երբեք հակառակը պատահի
մեղադրելին ինքն է: Կրնայ
զայն ունենալ իւր ներուժ չափո-
վըն ոչ միայն այս կարճ կենաց
մէջ, այլ գալոցին մէջ ալ, Գա-
լոցն ալ թերեւս լինի կամ ոչ:

Մարդը մէկանց բոլորովին չը
կատարելագործուի, այլ ժամա-
նակի հետ կ'աճի, նման թանկա-
գին իրերու: Ինչպէս Տէկ ծառը
մէկ գիշերուան մէջ պարտէզիդ
մէջ չի հասնիր նոյնպէս ալ ար-
դար մարդը մէկ օրուան մէջ:
Մարդուն անցելոյն մէջ ունե-
ցած կիրքերը՝ գործերը և խոր-

հուրդները չեն որ միայն կը
բովանդակեն զինքը, այլ իւր
առ օրեայ կեանքին միջև ապա-
գայ վախճանին ունեցածներն
են անոր ինչ տեսակ լինելն բո-
վանդակող, զի ամէն գործ, ամէն
խորհուրդ իւր արդիւնքն ունի,
ոչ միայն մարդուն արտաքինին
վրայ այլ նաև ներքինին հոգ-
ւոյն վրայ: Եթէ չարութեան հե-
տեւս ընթաց ժամանակի հոգ-
ւոյդ սովորոյթը կը դառնայ,
եթէ բարութեան հետեւիս
ամէն մի բարի գործ հոգիդ
գեղեցկացնող սրբադրութիւն
մը կը դառնայ:

[Շարունակելի]

ՔԱՀԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Սախալի կղզին

Թ. օր. 4 օգոստ.

«Ռեօքըր»-ի գործակալութիւնը կի-
մանայ թէ Սախալին կղզին ուս-
գործերու մեծագոյն մասը անձնա-
տուր եղած է ձառնցիկներուն յու-
լիս 31 ին: Կղզին կառավարիչը,
70 սպաներ եւ 3200 զինուոր գե-
րի բռնուած են:

Թ. օր. 4 օգոստ.

Ռեօքըր-ի Գործակալութիւնը կրօն
թէ նոր լուրերէն կը հետեցնէ թէ
թիւմիւ գետին հարաւային կողմը
ուս յառաջապահները շատ մօտե-
ցած են ձառնական գործերուն:
Ընդհանրուած վերահաս է:

Սախալին կղզին ուս գորաց անձ-
նատուութեան մասին հասնող տե-
ղեկագիրները կիմացնեն թէ ձառն
հեծկազօրաց ջոկատ մը յուլիս 20 ին
յարձակեցաւ Ռուսերուն վրայ
Գալէօյի մօտ, եւ զանոնք դէպի
հարաւ ետ մղեց: Յետոյ օգնութիւն
ստանալով, ալ աւելի առաջ մղեց
թշնամին, դէպի կղզին կեդրոնը:
Յուլիս 31 ին կառավարիչ ծառ-
բիւնով բանաճնաց մը դրկեց յայ-
տարարելու թէ Ռուսերը թէ ձեր-
մակեղէն, թէ դարմանումն նիւթեր
չունենալով չեն կրնար դարմանել
վիրաւորները եւ թէ հետեւա-
բար, մարդասիրական պատճառներով,
ստիպեալ են խնդրելու որ թշնա-
մութիւնը ընդհատուի:

ձառնական գորաց հրամանատա-
րը պահանջեց բոլոր պատերազմա-
կա պաշտոնները, կառավարութեան
սեփականութիւնները եւ քաղաքական

ու զինուորական վարչութեան տես-
րակները ու պաշտօնավթութիւնը:
Այս պայմանները ընդունուեցան եւ
անձնատուութիւնը տեղի ունեցաւ:

Լոնտոն 5 օգոստ.

Կր հաւաստեն թէ Սախալինի մէջ
գտնուող քաղաքական աքսորեալնե-
րը ազատ ձգուած են ձառն իշ-
խանութեան կողմէ եւ թոյլատրուած
որ ուզած տեղերին երթան:

[Խմբ. — Այդ կղզին գտնուող հայ
աքսորեալները եւս բնականապէս ա-
զատ ձգուած ըլլալով, կը յաւանք
թէ մօտ ատենէ Եւրոպա կամ Ամե-
րիկա անցնին:]

ՍՈՒԼԹԱՆԻՆ ԴԷՄ ԴԱԼԸ

Կ. Պոլիս 4 օգոստ.

Դաւադրութեան մասին կատարու-
ած քննութիւնները կը թուի վեր-
ջապէս արդիւնքի մը հասած ըլլալ:
Հաստատուած է թէ դաւը ի գործ
զրուած է միջազգային անխիստա-
կաններու կողմէ, որոնց հետքը զրա-
նուած է ժընէվի մէջ: Հոս ձեր-
բակալուող Պէլճիացի ժողովը կու-
րանայ ամէն մեղսակցութիւն, բայց
իր խօսքերը կը հակասեն ինչ որ
յայտնուած է իր կնոյ մեկնումի
մասին: Իր յայտարարութիւնը թէ
Պէլճիացի պիտի երթար եւ հոնկէ
Պուլկարիա, հասկցուեցաւ թէ սուտ
է:

Հասկած կայ թէ դաւադրութեան
ուրիշ երեք հեղինակները աներեւո-
թացած են Ռիբս անուանուածին
կորուսելու պահուն:

Սախալին թուրք շրջանակներու մէջ
կը հաւատան թէ Պուլկարիա, Հա-
յեր եւ երիտասարդ թուրքեր մաս-
նակից են այս դաւադրութեան:

Պոլիս 4 օգոստոս

Պաշտօնական — Եւթմէնի թուրք ղո-
րութեան հրամանատար մարաշախտ
Ֆէյզի փաշան կը հեռագրէ թէ նոր
յաջողութիւն մը ունեցած է: Մինչ
մարաշախտ Շաքիր փաշան կը գրուէր
ապստամբները Սանֆուրի ճամբուն
զանազան կէտերէն, Ֆէյզի փաշան
վանեց ապստամբները Հիւսիսէն,
նաեւ փախուստի մատնելով զանոնք
որ Ատիլի մէջ, [Մէնահաթ եւ Մէֆ-
հաթի միջեւ] համախմբուած էին:



ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ
ԱԶԳ. ՎԱՐՄԱՐԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Բուն նիւթը, զոր պիտի գը-
րեմ, գաղափարի զուգորդութեամբ կը
յիշեցնէ ինձ հոգեկաւոր «Երկնային
կատակերգութիւն» անուն հեղինա-
կութեան տէրը՝ Տանթէն. այս մեծ
բանաստեղծը, որ ով գիտէ՝ ո՛րչափ
գիշեր ու ցորեկ իրար խառնեց, մը-
տածեց, խորհեցաւ, որոճաց եւ ու-
ղեղը փորեց, գտնելու համար նիւ-
թը՝ հիմը՝ որուն վրայ պիտի
հիմնէր, երկնէն եւ կասեցանէր
մեծ կատակերգութիւնը. ու երեւի
շատ լուրջ էր այն ժամանակ աշ-
խարհը կամ աշխարհի այն մասը՝ յո-
րում կ'ապրէր Տանթէն. եւ գուցէ
այդ իսկ պատճառաւ՝ նա վերին,
եթերային գաւառները սլացաւ մտք
եւ այնտեղի կեանքը կատակաբեց-
եաց այսօր Տանթէն նման մէկը՝
եթէ փափաքի կատակերգութիւն գրել
եւ մինչեւ իսկ խեղկատակութիւն
գրել, ա՛լ պէտք չպիտի ունենայ
ի գործ դնելու եթերական ճախ-
րումներ, այնպիսին թո՛ղ զայ ուղ-
ղակի յ'Աղէքսանդրիա՝ եւ շնչտակի
հայրը երկնեւ վարժարանը, ուր պի-
տի գտնէ նիւթ ալ, ատաղձն ալ,
գրելու ալ, երգելու ալ, բանդուլու,
ալ, որքալու ալ, եղբերգելու ալ։

Այսպիսի խեղճ ու խառնակ, ող-
բալի, ծիծաղելի եւ կատակելի է այս
վարժարանի ճակատագիրը եւ վիճակը
յանձնուած տխրահոգ անհատի մը
անխիղճ եւ շահասէր ղեկավարութեան,
մարդու մը որուն անունը հանրային
գործի մէջ եղած չէ անհայտ, այլ
ԻԻԻՐԱՐԱՏ, եւ այս անձն է Սը-
բատ Բիւրատ կոչուած, որ այսօր
տնտեսելու զմարդը հարկին մէջն է
ինք կը թակնէ գործի գլուխը. մարդ
մը՝ որուն մասին պաշտօնական տօ-
քիւմաներ կը վկայեն։

1 «Թէ վարչութիւնս ներդաշնակ
գտնուելու համար հանդէպ Տ. Ս.
Բիւրատի, բաւական համարեց զայն
զաղրեցնել իւր պաշտօնէն, ի պատիւ
կարգ մը (հատ մը չէ)՝ նիւթական եւ
բարոյական զեղծումներու զոր ան-

խղճաբար գործած է եւն. . .
2 Եւ հեռագիտէ ձեռք բերուած
փաստեր կը ծանրացնեն Բիւրատի
զեղծումներու ընթացքն անհերքելի
կերպով. . . զիմեւ դատական իշ-
խանութեան . . .

3 «Ամեն բաժանորդ ուղղեմ իրենց
դրամն «Նոր-Օր» վարչութեան . . .

4 «Առ արդոյ բաժանորդ ուղղուած
ազգն, ուր Ս. Բիւրատի «Նոր-Օր»
խմբագրութիւնէ պարտուած փութա-
ցնող կարգ մը նիւթական եւ բա-
րոյական զեղծումներ . . .

ՆՈՐ-ՕՐ թիւ 36

5 Եւ դարձեալ պաշտօնական տ-
տեսագրութեան մէջ նշանակուած են
«Տոմար» մէջ հասոյթներու զեղծո-
ւթի. փոխուել . . . վաճառումներ
ձգական խեղճութեամբ «Եւ վերս-
տին գրուած . . . կարգ մը գուժար-
ներ իւր զանազան ծախք նշանա-
կուած . . . »

Ու այս ամենուն կը պատասխա-
նէ պ. Սմբատ Բիւրատ. «Թէ հաշ-
ւոյ մասին այնքան խոտապահանջ
ըլլալու իրաւունք չունին, քանի որ
իրենք թոշակաւոր պաշտօնեաներ
չեն։ » Ե՛ր, պատիւ. այս արամա-
բանութեան ընկեր կ'ալ։ Աղէք-
սանդրիոյ ազգ. վարժարանի պատ.
հոգաբարձուք ալ կարծեմ թոշակա-
ւոր չեն ուրեմն, ուրեմն, . . .

6 «Աղէք» մէջ մէկու մէկ լատա-
նորագիրը ստացուած էր թէ ո՛չ »
հարցման ի՞նչ պատասխանուի կը հա-
նք, խօսք հաւկցողներ կամ փաստա-
բաններ-«կարելի է. բայց չեմ յի-
շեր . . . »

Կորիզոն, թիւ 391 Ատենագրութիւն

Պ. Ընթերցող, յանձնուած է մեր
սերունդի կը թակնէ գործը ահա այս-
պիսի մի մարդու կի որուն հասարակա-
կան գործունէութեան մի ամենափոքր
պատկերն է դեռ ինչ. որ նկարագրուած
է այստեղ. անոր ամենափոքրին գոր-
ծերու մի փոքրիկ զիւր, որը եթէ
հերքելու քաջութիւնը կամ փաստը
չունի պ. Սմբատ Բիւրատ կը նշա-
նակէ թէ ճիշդ է, քանզի «որ լո՛ւն,
հաւանի» կըլտ առածը։ Տնտեսը։
Թէեւ ես մի քիչ չեղեցայ նպատա-
կէս, բայց որպէսզի վարժարանի վի-
ճակին հետ ծանօթանանք եւ անոր

ղեկավարին, պահանջելի էր այս թարմ
վկայութիւնը, որ երեւեցաւ յուլիս
15 ի «Հորիզոն»ի մէջ։

Այժմ անցնինք մեր բուն նիւթին
տարեկան քննութիւնը։ Աղէքսան-
դրիոյ ընտանիքներէն ցանցառ թւով
ազգայինք ներկայ են եւ լուռ ու
մուռ կ'ուսնիդրեն երկսեռ ուսա-
նողներու քննութեան. կը ներկայա-
նան վարժարանի բարձրագոյն կար-
գի (2. կարգ) աշակերտք մանջ եւ
աղջիկ հաւանաբար մինչեւ 17 տա-
րեկաններ։ Երջանիք պարմանիք, որ
ընթացաւարտ պիտի լինին, կը մտա-
ծենք մենք։

Բայց շատ շուտով կը հիասթա-
փուինք, կը ջնջուի մեր գեղեցիկ
մտապատկերը, որովհետեւ ոչ թէ
քննութեան այլ հանդէսի մը մէջ
կը գտնենք մենք պիւր, յուսախա-
րութիւնը կը տկարացնէ մեզ, իսկ
ուսանողներու մասնաւոր աղջիկնե-
րու խորին տգիտութիւնը մինչեւ
իսկ մայրենի լեզուի մէջ՝ կը մոր-
մոքեցնէ մեր սերտը. . . եւ ահա
կսկսի կատակերգութիւնը. «Ասոնց
արտասանութիւն ընել պիտի տանք,
կըսէ պ. Բիւրատ. եւ կը հրամայէ
մի աղջկան-արտասանէ՛ք ըստ ուսու-
սողք. ու խեղճ աղջիկը յուզիչ
ձայնով, ջղաձգական բռնազօրով ան-
չնոր շարժումներով կսկսի որ եւ
իցէ՛ մի բանաստեղծի մէկ ոտոնա-
ւորը՝ զոր շարժումներ առաջ գոց ըրած
էր անշուշտ, թո՛թովել, դերասանա-
կան ամեն շարժ ու ձեւ, ձայնա-
կան ամեն կոչ ու կոնիւն ի հան-
դէս բերելով ու գործելով ունիւն-
դերներու վրայ տպաւորութիւն մը,
ոչ սովորաբար կը թողու շանթօ-
ղի մը երգը. Աժ. իմ. դերասանու-
թիւն կ'ուսուցողի արդեօք այս
վարժարանի մէջ. . . բայց չ'աճա-
պարենք գուցէ վերջը մի սխալիդ
գտնուի վերապահուած. ու կը յու-
սանք, առաջինին կը յաջորդէ երկ-
րորդը, պատկերը յոյնն է. երրորդը
նորութիւն մը չի բերեր, ոչ ալ
յաջորդը, միւս գոտում, գոյուած, թիւ-
ւերու շարժում, եւ, առաջ աջու
ձախ, վեր ու վար, երբեմն թաթի
կամ բռնցի բաղնուսներ կուրծքի եւ
ստինքի վրայ, ոտքերու խիզախ-
մունք ու նահանջ հայեացք գէպի
առաստաղ կամ դէպի վար. . .

Իսկ հայ լեզուի վերաբերեալ ոչ
մի հարցում. հեռաւարտ ոչ թալ
պատասխան. ոչ հասարակ ընթեր-
ցումն, ոչ կարգացուած թացատը-
րութիւն, ոչ լեզուական գիտելիք
կամ կանոն. ոչ բառագիտութիւն
ոչ բառերու կազմական գիտելիք,
վերջապէս քննական ոչ մի երեւոյթ,
այլ միայն դերասանականութեան
յանուն քննութեան. կարճ խօսք,
«Եւ աղբը հապ մը» ժողովրդի ու-
սուցանական ախորժակին եւ «թոյ»
մը փշուած անոր գեղեցիկ ակնկա-
լութեան . . .

Ո՛վ Տանթէ, Տանթէ՛. չէ՞ կարելի
քեզ արդեօք վերստին ծնանիլ եւ
գրել մի-«Երկնային կատակերգութիւն»
—Աղէքսանդրիոյ մէջ, ուր երբեք
նիւթ չպիտի պակսի քեզ։
(Շարունակելի)

ՅՈՅՆԵՐԸ ԵՒ ՌՈՒՄԷՆՆԵՐԸ

4. Պոլսոյ Յունաց Պատրիարքա-
րանի Սինոդը փոխանակ բողոքա-
գրով մը Դրան դիմելու, շրջաբերա-
կան մը զրկեց երոպական Թուրքիոյ
բոլոր Մէթրօքօքիաներուն ասոնց
հրահանգներ տալով թէ ինչ ընթացք
բռնելու եւ Մակեդոնիոյ մէջ Ռու-
մէններու նկատմամբ եւ ուղեւորական
բրօքականտին հանդէպ։

Այս շրջաբերականին մէջ Սինոդը
կը յայտարարէ թէ Սուլթանին ի-
րաւէն Պատրիարքարանի իրաւունքնե-
րուն զպաժ է, կարգ մը Թուրքա-
պատկաններու ուղեւորական ազգա-
յանութիւն շնորհելով, որոնք ասիկ
յետոյ իրաւունք պիտի ունենան
օսմաննան (!) վարժարաններու մէջ
իւրեւն լեզուն ուսանելու, իրենց
յատուկ քահանաներով պատարագը
ուսմաննան կատարելու, եւ աւելին
սնտք պիտի կընան մուստարներ
ընտրել այն տեղերուն մէջ ուր ի-
րենք մեծամասնութիւն կը կազմու-
իցին։ Գործարք։

Մակեդոնիոյ մէջ շատ մը ուսմա-
նացի քահանաներ պատժուեցան
պատրիարքական Սինոթին կողմէ, ո-
րովհետեւ (Թուրքո-Ռուսներու) ուղեւ-

ՄԻ ՔԱՆԻ ՄՏՔԵՐ
ԵՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Ինչպէս որ մի հասարակութիւն կաղ-
մուած է իւր անդամներէ, այն-
պէս էլ մարդկութիւնը կազմուած
է ազգութիւններէ։ Իւրաքանչիւր
ազգութիւն իւր այլեւ այլ անհատա-
կան յատկութիւններն ու առանձ-
նութիւններն ունի, որոնց թվում ի
հաշիւ պէտք է առնել անշուշտ նոյն
ազգութեանը պատկանող մայրենի
լեզուն։ Պահպանել ազգութիւնների
անհատական յատկութիւնները՝ նը-
շանակում է օրուտ բերել ամբողջ
մարդկութեանը։

Մի օրպանական մարմին համար
իրան կազմող բոլոր մասերը ան-
հրաժեշտ հարկաւոր են։ Օրգանա-
կան մարմինը իւր բոլոր գործարան-
ներով կազմում է այն՝ ինչ որ

գիտութիւնը անուանում է անհատ։
Ջրկեցէք մի կենդանի մարմին իւր
գործարանների կամ իրան կազմող
մասերի մէկից, եւ մարմինը կը կորցնի
իւր օգանական ամբողջութիւնը։ Ջր-
կելով նրան իրան կազմող մի մա-
սից՝ դուք չ'առաւում էք ամբողջ
անհատին։

Աւստրալիայի պետական անձինքնե-
րից շատերը իրանց հայրենիքի փայ-
լուն ապագան տեսնում են իրանց
պետութիւնը կազմող զանազան ա-
ռանձին առանձին ազգերի միութեան
մէջ, եւ երկիւղ չկրելով տէրու-
թեան բաժանումներէն՝ իրանց քա-
ղաքականութիւնը այն հիմունքների
վրայ են դնում որ յիշեալ ազգու-
թիւններից իւրաքանչիւրը անկարող
լինելով առանձնապէս հիմնել մի
անկախ տէրութիւն՝ աւելի օգտաւէտ
պիտի համարէ մի լծորդուած աւ-
բողջութիւն կազմել ընդհանուր պե-
տութեան մէջ՝ այն մասերական մի-
ութեան (եւ ոչ թէ միակերպութիւն)
պայմանով միայն, որ ամեն մէկին
աւելի ընդարձակ ազգային ինքնա-

կայութիւն տրուի. իւրաքանչիւրի
լեզուն կատարեալ ազատութիւն,
որ ամենքն էլ զգան թէ հիւր չեն.
այլ իրանց տանն են։ Եւ այն ժա-
մանակ միաւորուած պետութեան
քայքայում անկարելի կը լինի.
ինչպէս որ է Ջրեցերիայում, ուր
կատարեալ միութեանը ոչ թէ միա-
կերպութեան միջոցով են հասել,
այլ բողոքականութեան եւ միմիանցից
բոլորովին տարբեր տարրերի մէջ
հասարակչութիւն մտցնելով։

Ֆրանսիայի մէջ յեղափոխութեան
գլխաւոր սխալումնքն այն է որ
իւրաքանչիւր քաղաքական կուսակ-
ցութիւն համակողմ կառավարութեանը
ամեն միջոց գործ էր դնում նա-
խորդ կուսակցութիւնների հետքերը
ջնջելու եւ ժամանակակից բոլոր կու-
սակցութիւնների գոյութիւնը ար-
մատեց հանելու։

Աղատութիւնը չպէտք է մենապա-
ճառութիւն կամ առանձնաշնորհու-
թիւն լինի. մի որ եւ է կուսակ-

ժողովրդի ներկայացուցիչները դա-
տարան պիտի մտնեն ոչ միայն որ-
պէս պահանջողներ կամ պատասխա-
նատուներ եւ կամ կորագրուի դա-
տապարտներ, այլ եւ իրեն եւ իրեն
խառակիցներ եւ օգնականներ պե-
տական դատաւորների, իրեն ներ-
կայացուցիչների հասարակական խը-
ճի եւ զաղափարի։

Ֆրանսիայի նման մի ազգ կամ
առհասարակ որոշ զարգացման հա-
սած կամ հառուսացած մի ազգու-
թիւն՝ առանց քաղաքական ինքնա-
կառավարութեան եւ կամ մի ժո-
ղովրդի, առանց համայնքների ինք-
նավարութեան՝ իշխանութիւն ունե-

նախան դատին կողմնակից գտնուեցան :

Պիթոլիայի յոյն Մէթորօլիտի որոշեց իր թեմի եկեղեցիներուն մէջ կարգաւ այն որոշմնագիրը որով կարգաւ պիտի ըլլային էօքնիօս առւմէն քահանան եւ էօթէնիօս արքեպիսկոպոս յոյն մէթորօլիտը քահանայապետութենէ զրկեց Ղէրմանօս վարդապետը որ Պիթոլիայի Ռուսիաներուն միացեալ էր : Վարդապետը մէթորօլիտէն խնդրեց իր իրաւունքին վերադարձուիլ եւ մերժուեցաւ : Ուստի ստիպուեցաւ Մօնասթըրէն հեռանալու :

Գասթօրիայի Ռուսիաները պաշտօնի վերակոչեցին ժէօրթ Բօրա անձնն առւմէն քահանան , բայց Պիթոլիայի յոյն մէթորօլիտը անոր դէմ արգելքի հրամանագիր հանդիս եւ սպառնացաւ նոյնիւրի եթէ պատրիարքարան չը վերադառնայ :

Էնիսէր. Ռուսիան

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

Կալացէն մեզ կը գրեն յուլիս 21 թուով .

«Տեղւոյս Օսմ . Հիւպատոսը հայ պանդուխտներու պատուիրեց. որպէսզի տաճիկներու հետ հիւպատոսարան երթանք եւ Սուլթանին վտանգէ ազատուիլը շնորհաւորենք եւ կրկին գալիք վտանգներէն զերծ մնալուն համար աղօթքներ եւ մաղթանքներ ընենք : Բայց տեղւոյս ազգայինք կարեւորութիւն չը տա-

յող մարդկանց ձեռքում խաղալիք, որս եւ վերջապէս զոհ կը դառնայ :


«Բախտաւոր կեանքը թո՛ղ ձեզ լինի, իրաւամբ ասացին էլզապը եւ Լօռէնը Գերմանիային, թող մենք քամախտ լինինք մեր դժբախտ հայրենիքում : Ի՞նչ հարկաւոր է մեզ ձեր տուած ազատութիւնը . մի՞թէ կայ ազատութիւն առանց անկախութեան եւ անկախութիւն առանց հայրենիքի. տուէ՛ք մեզ մեր հայրենիքը : Հայրենիք , հայրենիք , ողբում է ժողովուրդը, հայրենիք , հայրենիք, կրկնում մարդկային բնութիւնը : Եւ սըրանք միայն քամախտները չեն Գերմանիայում :

Ամեն մի ֆիզիկական յաջողութիւն, որին սուբններով եւ պայթող ուռւմբերով են հասնում , ձեռք է բերվում ի հաշիւ մտաւոր—բարոյական եւ տնտեսական բարեկեցութեան ոյժերի անփոխարինելի կորստեան :

Մի գաղափար կամ միտք երկիւղ չը պիտի կրէ հակաճառութիւնից :

Ծաղկաւաղ անկշով հանգուցեալ Պողոս Իզմիրեանի յրագրական յօդուածներէից հաւաքեց : Ն . ՅԱՐՈՅ Մարտ 1-ին 1897 թ .

Թիֆլիզ



ւին այդ զգուշիկ կոչին : Միայն երեք հոգի նկատի չստնելով, որ նոյն Սուլթանն 300,000 անմեղ հայերու արեւնով ոռոգեց ծայրէ ծայր Հայաստանի հողերը, նաեւ տակաւին հայրենիք գնալու համար իր խնտարգելքները կը շարունակէ, եւ չենք գիտեր ինչ սրտով դացին տաճիկներուն հետ հիւպատոսական կոչին գոհացում տալու եւ մեր արեւնարգու թշնամիին արեւշատութեան մաղթելու : Անուշտ լախը եւ հիւպատոսարանի սպանալիքը զիրենք ստիպեց որ երթան առ երես մասնակցին բարեմաղթութեան իսկ ի սրտէ անթիւն Մեծ Ոճրագործը : Բայց այդ երեք ազգայիններու ազատ երկրի մը մէջ այս աստիճան վախկոտութիւնը կապացուցանէ թէ անոնք եթէ Տաճկաստան գտնուէին առ անի ամէն վատութիւն պիտի յանձն առնէին : Այդ երեք հայերու անուններն են Վ . . . , Կ . . . , եւ Յ . . . »

Դ. ԽՄԲ. — Մենք կը խնայենք այս անգամ այդ երեք ազգայինները իրենց ամբողջական անուններով ու մականուններով հրապարակաւ նշաւակել , զգուշացնելով որ անոնք ուրիշ առթիւ արտասահմանի հայութեանը վարկաբեկող վատ օրինակ մը չը հանգրաւան :

Սօֆիայէ մեզ կը գրեն

«Ուղեւորութեան միջոցին քանի մը օր Սօֆիա մնալով հայ եւ օտար շրջանակներէ հաստատեցի թէ մեր ազգայիններէն բնիկ Փիլիպպի բժշկիչ Թոք . Նշան թագաւորեան՝ որ քանի մը տարիներէ ի վեր Սօֆիա հաստատուած է , լաւ համբաւ մը չինած է իր շուրջ եւ յաջողած է իր բժշկական ճարտարութեամբը համարուածը գրաւել Սօֆիայի հասարակութեան , ուր հարիւրաւոր բժիշկներ կը վրտան . արդէն Պուլկարիոյ ուրիշ քաղաքներուն մէջ ալ զինք ճանչցողները գովատով կը խօսին իր յաջողակութեան մասին :

«Տօք . Թագաւորեանի այժմէն ձեռք բերած այս դիրքը ու համբաւը իրեն աւելի փայլուն ապագայ կը խոստանան եւ պատիւ կը բերեն Պուլկարահայութեան : Եթէ Կ . Պօլիսը իր ինքնաստճանները , Բեաթիլիաները եւ փէշիկմալիները ունենալու պարտանքը ունեցած է , Պուլկարահայութիւնն ալ բոլորովին զուրկ չը մնար այդ պարտանքէն՝ Սօֆիա մայրաքաղաքին մէջ ունենալով տօք . Թագաւորեան մը բնիկ Պուլկարահայ եւ ճարտար, աշխոյժ ու համակրելի »

Ա Ջ Դ

Ռուսներոյ Զօքան քաղաքի Հայոց եկեղեցւոյն համար պէտք է ուսնալ , բարեկրթ եւ իւր նուիրական կոչումն լաւ ճանաչող քահանայ մը .

Նոյնպէս միեւնոյն բարեմասնութեամբ օժտեալ երաժիշտ մը՝ քաղցրանուագ ձայնի .

Փախաքողները զիմէն գրաւոր որոշ տեղեկութեամբք ու միայնգամայն ազգային պաշտօնական վկայութեամբ առ

Հոգաբարձութիւն Հայոց (Ռուսական) ԶՈՐՇԱՆ



ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍՏ ՍԱՄՆՈՅ ԵՒ ՏԱՐՆՈՅ

ՀԱՅ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐՈՒՆ

ՔԱՂԱՔ ՍՈՒՐԱՎ—ՉԱԿՕՐԱ

—()—

	Փր.
Տ. Սարգիս Փափագեան	10
« Սիմէոն Մէճէլեան	10
« Յովհաննէս Յակոբեան	2
« Հաճի Ղազար Խաչատուր	2
« Ազարիկ Փափագեան	3
« Միքայէլ Մկրտիչեան	1
« Յակոբ Ալեանաք	1
« Յովհաննէս	1
« Յակոբ Կալմարար	2
« Սարգիս Ռուբէնեան	5
« Կարապետ Ֆէլէմէնկեան	3
Ընտանեկան երեկոյթէ մը	30
Սիւրբէնի գանձանակէն Սասնոյ նպատակին	55
Տ. Պօղոս Յարութեան	2
« Մարգար Միքիմարեան	1
« Մանուկ Յարութեան	2
« Յովհաննէս Յակոբեան	1
« Համբարձում Յովհաննէս	4
« Կարապետ Հովսէփ	3
« Յարութիւն Մուրատ	2
« Գրիգոր Կարապետ	4
« Գէորգ Մանուկեան	3
« Աստուածատուր Գրիգորեան	2
« Մկրտիչ Աբրահամեան	2
« Միկիմ Գրիգորեան	3
« Թորոս Յակոբեան	2
« Սեւոր Յակոբեան	2
« Համբարձում Մուրատ	2
« Կարապետ Յովսէփ	2
« Յարութիւն Մուրատ	1
« Յովհաննէս Ղազար	1
« Միսակ Ղազարեան	1
« Պաղտատար հազոյեար	2
Հին գանձանակի հա.	
սոյթէն մնացած	15
Ընդհ. գումար ոսկի ֆր.	180

Ծանօթութիւն — Նախորդ հանդանակութեան արդիւնքը ֆր. ոսկի 480 որ զրկուած է ֆրանսական յանձնախմբին

Ներկայ հանգանակութեան արդիւնքը որ զրկուած է ազգ. պատրիարքարանին

180

Համագումար

660

Ի գիտութիւն պատուարժան նուիրատուաց յայտարարելով զայս, կը յայտնենք մեր շնորհակալութիւնները , եւ կը մաղթենք կար եւ կարողութիւն :

Աղօթարար ազգիս

Վաղիկակ Բահուսայ

13 Յուլիս 1905

Իսթիմիա

Ո Ի Շ Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ն

Թղթատարական վարչութեան օրէնքներուն անտեղեակ գտնուելով երբեմն ազգայիններ պատճառ կը ըլլան որ իրենց զրկածներուն մենք հոս տուգանք վճարենք կամ զայն ստանալ մերժենք : Որպէս զի այդ կարգի անպատեհութիւններ չըլլան հարկ դատեցինք հետեւեալ քանի մը ծանօթութիւնները տալ :

Պուլկարիոյ որ կողմէն որ պահանջի մէջ գրուած ու գոցուած նամակ , ձեռագիր կամ լրագիր զրկուի մեղ , պէտք է 15 կրամի համար 10 սանդղիկ նամակադրոյժ փակցնել : Եթէ լրագրի մէջ հրատարակու

համար ձեռագիրներ զրկուին , պէտք է պահարանը գոցել : Այս պարագային 5 սանդղիկ նամակադրոյժով մը կարելի է զրկել , պայմանաւ որ պահարանին մէջ նամակ կամ նամակաձեռ ուրիշ զրուիւն չը գտնուի :

Պուլկարիայէ մեղ զրկուելիք տուգանքը թուղթերու 100 կրամին 5 սանդղիկ նամակադրոյժ փակցնել կը բաւէ , պայմանաւ որ պահարանի մէջ գոցուած չըլլան : Եթէ արտասահմանէ զրկուի 50 կրամին 5 սանդղիկ եւ 100-ին 10 սանդղիկ պէտք է փակցնել :

Ռուսներոյ Պուլկարիա զրկուած նամակներուն 15 սանդղիկ , իսկ քարդրօթաւններուն 10 սանդղիկ զրոյժ պէտք է դնել :

Ռուսներոյ եւ Սերպիայէ զատ բոլոր երկրներէ Պուլկարիա զրկուելիք նամակները 25 սանդղիկ նամակադրոյժ կրկու են :

Այս պայմաններուն ուղարկութիւն չընելով , պակաս նամակադրոյժով մեղ զրկուած նամակ , ծրար եւ այլն չենք ընդունիր , եւ կը կորսուին :

ԱՁԴ

Սիւրբէնի երկսեռ դպրոցի մէջ պաշտօնավարելու համար, կարող վարժուիլի մը պէտքը կայ, գոհացուցիչ ամսականով, մանրամասնութեան համար գիտել հոգաբարձութեան ատենապետին :

Ի դիմաց Հոգաբարձութեան

Վ. Առնանդարի Ատենապետ

Վ. Արապեան Աղեթ. Դ. Բիզիլեան

1905 Յուլիս 23

Սիւրբէն

ԾԱՆՈՒԹԻՒՆ

ԹԻՒՂԱՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր .

» Բ. » [433 էջ] 2 ֆր .

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԶ ՀԱՅԱՍՏԱՆԻ երկրորդ անգամ տպագրուած եւ ճոխացած. Դին 1 ֆր .

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկարիայի նիստ ու կացը եւ թուրքերէ կրած ստապանքը անոնց ազատութենէն առաջ . Դին 50 սանդղիկ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՋՆԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն : Ձեռքիւ զին 1 ֆր .

Այս գրքերը ստանալու համար դիմել ՎԱՌՆԱ «Ի Ր Ա Ն Ք» ի խմբագրութեան

ՍՕՅԻԱ Տ. Օննիկ Գարսեանի

ՊՈՒԴՐԵՇ Տ. Օննիկ Փափագեանի

եւ Տ. Յ. Պիպէռեանի

ԲՕՆՍՏԱՆԻ Տ. Սիսակ Մէլիքեանի

ԳԱՀԻՐԵ Տ. Կարապետ Էրզնկացեանի

ԱՂԵՔԱՆԴՐՈՒՄ Տ. Ստեփան Մաղմանեանի

ՈՒՍՏՐ (Ամբրիկա) Տ. Յակոբ Յրանդեանի

ՊՕՍԹՈՆ Տ. Ա. Ասքանազի

ՓՐՕՎԻՏԷՆՍ Տ. Մ. Տէր Պողոսեան

Կ Ո Ւ Ջ Ո Ւ Ի

Վառնայի Ազգ. վարժարանաց համար կարող եւ վկայեալ ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ կուզուին :

Փախաքողները կրնան զիմել անձամբ կամ գրաւոր վարժարանաց հոգաբարձութեան :

Հոգաբարձ. Ազգ. երկ. վարժարանաց Վառնայի [Կնիք]

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Եւթն ըսեաննա տայիր թիւք մէնպարընտան վերին հալատիւթէ կէտրէ, թիւք ասքերէրի պիր գաշ նոգթատան ասըլարը կէրի սիւրմէկէ մուլա- ֆազ օլմուշլար, ֆազաթ պու հալատիւթէ ինկիլիզ վէ սայիր մէնպարտան թաստիդ օլընմա- տըղընտան շայանը էմնիլէթ ատտ օլընմազլար :

Պու պապտէ թիւք հալատիւթը թէքիլպ իտէն թէլէկրաֆլար « էքո տը Բառիտէ միւնտէրիճ օլուպ, ան- լէրի ճուսա էրթէսի կիւնքի կազէթամըզա տէրճ իտէնէկիլ :

Ալպանիստա՝ պա խուսուս Սքիւզ վիւլայէթիւնտէ՝ արնալուտ- լարըն հաշարաթը սոն հաֆթա- լարտա արթմըշ վէ Սիւպիա վէ Գարատաղ սիւնօրլարընտա սար- գընթըլըզլար վուգու պուլմուշ օլտըղընտան նաշի, էլիլիէր Պապը Ալիէ միւթթէֆիգէն պիր նո- թա վէրուպ, Ալպանիստա գուլ- վէի ասքերէնին արթըրըլմա- սընը թալէպ իթիլէր : Պապը Ալի տախի եէնիտէն 3 թապուր ասքէր Շէմսի բաշայը գուլվէթ- լէնտիւթէք իշիւն Սքիւզէ կէտն- տէրմէկէ էմիր վէրտի :

Սուլթան Համիտի էօլտիւր- մէք գասթը իլէ պոմպա աթ- մըշ օլանլարըն էննէպի անար- չիսթէր օլտըղը թէպէյիւն իթ- միշ տիր : Օլ սէպէպտէն պիր չօգ էրմէնիլէր տէրտէսթ օ- լընտըլար : կէտնա անարչիսթէ- րի թէպիլիգ ու թահրիգ իտէնլէր էրմէնի իսթիւլալըլար ըմըշ- լար : Թիւքըլէր պուլկար գոմի- թանըլարըն տախի մէտիւլի վար ըմըշ տէյօրօար : Թէվգըֆաթ վէ թէտգըգաթ էլան տէվամ իթմէքտէ տիր :

Տիկէր թարաֆտան թիւք հիւքիւմէթի Սթանպուլտա վէ թաշրալարտա իսլամ վէ խրիս- թիյան միլլէթիւթին մուրախաս- լարը վէ քիլիսէ մէճիւլէրի գօրգուտուպ, հէր հալտէ Սուլ- թան իշիւն տուվա օգուլմայա մէճպուր իտէյօր :

Մանասթըրտա տախի եօգ- լամալար վէ իսթիւթաղլարաթ- մըշ տըր : Մանասթըր Մէտ- րօթիլիտ գալմագամը ատտ օլը- նան Սթանպուլտաքի պուլկար էքզարքըն վէքիլի հապս օլըն- մըշ տըր :

ՏԱԽԻԼԻԷ

Սուլթանըն էօմրիւնէ սուի գասթ վագաստընտան տօլայը Պուլկարիա կազէթալարընտա Սուլթան ալէյհիւնտէ եազըլան սիթէմլէր վէ իսթիւթալար ի- չիւն մուհարրիլէրին ճէզայան մասընը թիւք հիւքիւմէթի Պուլկարիատան թալէպ իթմիշ տիր :

Քէօստէնէց-Պանեատա քեա- ին քիպրիթ ֆապրիգասընտա հարիգ զոհուր իտէրէք, պիւ- թիւն եանմըշ օլտըղընը Սօ- ֆիատան պիւտիլիլիյօր :

ՐՈՒՍԻԱ

Երեւան վալի նապ օլընմըշ օլան բըէնս Պոնարարթ էվլէնճէ կէօթէրտիկի պիթարաֆլըղը թէրքլէ, շիմաի էրմէնիլէրի թէ- չեիգ իթմէկէ պաշլամըշ օլտըղը Դրօշլակ եազիյօր : Քէնտիլէրին թալթարլարըն թէճալիւզաթըն- տան մուհաֆաղա իտէն էրմէնի քէօյլէրի շիմտի հիւքիւմէթտէն թէղիլիգ օլընմագտա ըմըշլար : Բըէնս Պոնարարթըն « էմրի իլէ եիւլլէրճէ գազաղլար Եուլա, Աշ- տարակ վէ սայիր պիր չօգ էր- մէնի քէօյլէրինէ տօլուպ հէր պիր զուլմու գատընլար իւզէրի- նէ տախի իճրա իտէրէր իմիշ : էրմէնիլէրին սիւհալարընը ա- լուպ, հապս իտէրէր, հալ պուքի թալթարլարըն էն ճանիլէրի սէրպէսթ պըրագըրլար ըմըշ : Թալթարլար պիր տէֆա էրմէնի- լէրին գարըն գօյմալարընտան սիւմիշ վէ գօրգուշ իքէն, շիմ- տի բըէնսին թալթ ու հարէքէ- թիւնտէն ճէսարէթ քէսպ իտէրէք : Թէքրար վաշիլիքլէրէ պաշլա- մըշլար : Գազաղլար սիւհալը հէր պիր էրմէնի թաադիպ իթմէքտէ իմիշլէր :

ՄՈՒՀԱՐԵՊԷ

Մանչուրիատա տախի իքի տիւլման օրտուլարը պէյնիտէ ումուժ մուհարէպէ եագըն կէ- րիւնիյօր : Պու տէֆա Րուսլա- րըն օրտուլը Մուգտէնտէքի գուլվէթլէրինտէն 50,000 քիշի տահա զիյատէ իմիշ :

Ճաբօն օրտուլը շիմտի շէյլէ թէշքիլ օլընմըշ օլտըղը մէյ- տանը մուհարէպէտէն Բէթիւրս- պուրկա պիւտիլիլիլի տիր : Ժէ- նէրալ Նօկիւնին օրտուլը սիւ- վարիլէրլէ պէրապէր սօլ գօլ- տա, Ժէնէրալ Օգուլըն վէ Նօ- ցուլըն օրտուլարը՝ մարէշալ Օհամանըն թահթը գոմանտա- սընտա պուլընան սիւվարիլէրլէ մէքքէգտէ, Ժէնէրալ Քուրօքի քէնտի օրտուլը իլէ սաղ գօլ- տա ըմըշլար, վէ սօլ գօլուլ ուճ գըսմը Գամուրանըն գօ- մանտալը ալթընտա պուլընը-

յօր : Ժէնէրալ Հասէկալա տա- խի օրտուլը իլէ Գօրէատա պու- լընմագտա տըր :

Ժէնէրալ Նիսէ իսէ 13, 14 15 ինճի բիատէ ֆըրգալարը ի- լէ վլատիլօսթօքա տօղրու ի- լէրլէմէքտէ տիր :

Րուս սուլհ մուրախարը Մ. Վիթթէ Ամերիկայա եթիշուպ իւք իշի էօտիւնճ բարա պուլ- մանըն եօլուլը արամաղ օլմուշ տըր : Փագաթ պանգէրլէր էն էվլէլ միւսալէհայը իմզալամաղ իգթիլա օլտըղընը անա սէօյլէ- միշլէր :

Պիր բէվայէթէ կէօրէ, Մ. Վիթթէնին էվրադը օգուլա- րագ, անըն Չարտան բէյ ալ- մագսըղըն սուլհա գարար վէր- մէկէ մէզուլնիլէթի օլմատըղը անլալըմպը իւզէրինէ, ճաբօն մուրախարըն միւզէքէրլէյէ կի- րիշմէյի բէտտ իթմիշլէր :

ՄԻԻԹԷՆԷՎԻԷ

Մարօք մէսէլէսիւնտէն տօլա- յը լէճէմմիւ օլընմագ գօն- ֆէրանըն իւննէքտէ օլմատը- նը Սպանիա հիւքիւմէթի միւ- րատճա հատտ իթմիշ տիր : շու հալտէ Մատրիտտէ թէճէմ- միւսիւ իշիւն Ալամանիւնըն թէք- լիթիլի Սպանիա բէտտ իթմիշ օլտու :

Ինկիլիզ գրալը վէ Ալմա- նիա իմրէրաթօրը եագընտա կէօրիւշէճէքլէր իմիշ : Փագաթ շիմտիլիք վագթը վէ մահէ- լի թային օլընմամըշ տըր :

Իքի Գօրեալը մէմուլար Մ. Րուզլլէթ միւրաճաթլէ Գօրէանըն իսթիլալիլէթիւնի մուհաֆաղա իթմէք իշիւն թէ- վասիւթ իթմէսիւնի բէճա էյ- լէմիշլէր :

Ինկիլիզ տօնանմասընըն Պալ- թիկ տէնիլիլէ կիտէճէկիւնտէն տօլայը ալման կազէթալարըն վէլլէլէ գալտըրմըշ օլտըղլա- րընը պուլնտան էվլէլ եագթըն ըտըգ : Շիմտի Լօնտրատան պիւ- տիլիլալիլի իւզրէ, ինկիլիզ վիւ- քէլասընտան պաղըսը տօնան- մանըն իզամընը թէէլիլ իթ- մէք էֆքեարընը պէյան իտէր- լէր իմիշ : Փագաթ տիկէր նա- ղըրլարըն պու խուսուտա հէ- մէֆքեար օլմալարը մէմուլ օ- լընմաղ :

Պուգրէշտէն յուլիս 28 թա- րիլլէ պիւտիլիլիլի տիր :

Քէօստէնճէ հիւքիւմէթի թիւք էհալիտէ Սուլթանա գար- շը սուի գասթ էսէրլէրի մէյ- տանա չըգարտը : Պաղը էվլէր եօգլանուպ, քիւլիլիլէթի մուհա- րէպէ թիւքէնկիլէրի, բէվօլլէր- լէր, ֆիշէնկիլէր վէ միւլիլի էվ- րաղլար պուլընմըշլար տըր : Րումանիա հիւքիւմէթի՝ պիւլա- խէրէ Սթանպուլտան Քէօստէն-

ճէյէ կէլմիշ օլան պիր վարօրտա շուվալլար իշիւնտէ հըֆգ օլըն- մըշ հարպ թիւքէնկիլէրի պուլ- տու :

ԹԻԻՆՃՆԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, Եուլիս 27
ՉԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ

Վալօն 54-60 լիպ. 9.50 / 10. 50
Արապա 52-62 լիպ. 8. / 11 20
ԱՐԲԱ,

Վալօն 100 քիւ Կիւ 11. / 11. 20
Արապա եէնի 42-47 լիպ. 5. 80 / 6. 30
ԵՈՒՂԱՅ արապա 33/36 լպ. 5. / 6. 40

Վալօն 100 քիւ 9. 40 / 10. 20
ՅԱՍՈՒԼԷԱ 100 քիւ Եօգ
ՌԱԲԻՑԱ 100 » 19. 20 19. 60

Արապա 100 քիւ 16-18
ՏՍՐ արապա հէքթ. Եօգ
ԳՕԼՕՁ արապա 55-60 լպ. 11. / 12. 80

ՄԻՍԻՐ 57-58 լպ. Եօգ
» 100 քիւ 11. 20- 11. 90
ՉԱՎՏԱՐ արապա 7. 70 / 8.

» 100 քիւ 10. 80 / 11. 20
Կիւնտէ 4-5 վալօն վէ 70-80
արապա կէլմէքտէ, վալօն մուսմէ-

լէսի նարթլէտն 20 ֆր. արապա մու- տմէլէտի նարթլէտն 20. 20
ՍՍՐԱՅԻՑԷ

Նարթլէտն 20, 20 ֆրանք
Օսմ. լիւրար 22, 75 ալթուս ֆրանք
ՊԱԳԱԼԻՑԷ

Վարնա բիւղանընտա պագալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիլպիլը, ալթուս ֆրանք իլէ :

ԳԱՇՎԷ 1,98 / 2.15
ՇԷՔԷՐ Նէմցէ 75
ՇԷՔԷՐ քէսիլ] սանարգ 38.

ԲԻՐԻՆՃ Ճէնօվա շուվալը 42
» Ճարսն » 34
» Ինկիլիլ » 28.

» Բիգօն » 49.
ԿԱՁ Սանարգ 11. 60
ՉԷՑԹԻՆ Լաղը քիւ 85.-1

ԳՈՒՐՈՒ Իւզիւմ 25

ԸՆՏԻՐ ԳՍՑԱԼՈ

Չուտ իաղօղէ պատրաստուած բնա- կան քաղախի նորահաստատ միր մը- թեքանոցը առիթ կընծայէ յարգոյ հա- տարակութեան որ ասկէ յետոյ զերծ մնայ խարդախեալ եւ այլեւայլ դե- դերով պատրաստուած կեղծ քաղախ- ներու վնասներէն : Մեր քաղախին անարատութիւնը եւ ազդուութիւնը ամէն երաշխիք կընծայէ իր առողջու- թեան նախանձախնդիր յաճախորդին, որ՝ անգամ մը փորձելով արդէն հաս- տատած պիտի ըլլայ գերազանցու- թիւնը :

Գուրտէն մեծաքանակ յանձնարա- րութիւնը փութով կը գործադրուին ի հարկին նմոշ ալ զրկելով :

Հասցէ՝

ԱՐՄԵՆԱԿ ԳԱՍԱՊԵԱՆ
Փողոց Գօրծիլ թիւ 65 ՎԱՌՆԱ

ՀԱՅԱՍՏԱՆ ՆՈՐ ԴԻՐՈՑ

ԱՄԻՐԻՍԱՆԵԱՆՑԻ

Ի Վառնա

Գլխուորդապէս ֆրանսիերէն լեզուով
Պարտուորիշ են նաեւ Հայերէնը եւ Պուլկարերէնը, իսկ Գերմաներէնը, Անգլիերէնը եւ պիսնոն փափաքող- ներուն մասնաւոր պայմանով : Դպրո- ցը կսկսի յառաջիկայ սեպտեմբերի մէկին : Ամիսը 8 ֆրանք մէկ աշա- կերտէն : Կան արդէն գիշերօթիկներ, եւ մի քանիք ալ կընդունուին : Այս մասին զրմիւ կրէքշարթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը երեկոյեան ժամը 5-8 եւ կամ նամակով
Ա. ԱՄԻՐԻՍԱՆԵԱՆՑԻՆ
3-5